ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԼԱՅԱՆ ԱՍՏՂԻԿ ԺՈՐԱՅԻ

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.02 – «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց լեզու)
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ջ. Հ. Գյուլամիրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ. Մ. Խաչատրյան**

Մանկավարժական գիտությունների թեկնածու **Ա. Ռ. Վարդանյան**

Առաջատար կազմակերպություն՝ Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016 թ. մայիսի 12-ին՝ ժամը 12:00-ին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. ապրիլի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Ա. Հ. Սվաջյան

Հետազոտության արդիականությունը: Ժամանակակից աշխարհի սոցիալ - տնտեսական, քաղաքական, մշակութային հարաբերությունների կառուցման այս փուլում կարևոր է ոչ միայն ճանաչողական զարգացած կարողություններով օժտված, այլև արդյունավետ հաղորդակցվող, համագործակցային բավարար հմտություններ ունեցող քաղաքացիների դաստիարակումը, ինչը կրթական համակարգից պահանջում է ձևավորել ինքնուրույն սովորելու, ստեղծագործաբար մտածելու և ամենատարբեր իրավիճակներում խնդիրներին արդյունավետ լուծումներ առաջարկելու կարողություններով, ողջ կյանքի ընթացքում սովորելու ցանկությամբ և պատրաստակամությամբ օժտված սովորողների:

Ուսուցման անձնակողմնորոշիչ մոտեցման պայմաններում հատուկ նշանակություն է ստանում ***յուրաքանչյուր սովորողի*** տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառումը, ինչպես նաև դրանց զարգացման գործում սովորողի առաջատար գործունեության դերի որոշումը: Տարրական դասարաններում մայրենի լեզվի քերականության ուսումնասիրումն միտված է սովորողների լեզվամտածողության, մտավոր և ստեղծագործական, հաղորդակցական և համագործակցային կարողությունների զարգացմանը, լեզվի՝ որպես հաղորդակցական համակարգի կառուցվածքի մասին գիտելիքների ձեռքբերմանը, խոսքային գործունեության ընթացքում մայրենի լեզվի հարուստ հնարավորությունները լիարժեք, գրագետ կիրառելու կարողությունների ձևավորմանը:

Ուսումնասիրվող հիմնահարցը բավականին խոր արմատներ ունի. այն դիտարկված է հայ և արտերկրյա մանկավարժ - մեթոդիստների աշխատանքներում՝ Դ. Թրակացի, Գ. Մագիստրոս, Վ. Արևելցի, Հ. Երզնկացի, Ե. Նչեցի, Հ. Ծործորեցի, Գ. Տաթևացի, Ա. Սյունեցի, Խ. Աբովյան, Ղ. Աղայան, Մ. Աբեղյան, Ա. Բահաթրյան, Ն. Տեր - Ղևոնդյան, Ս. Պալասանյան, Մ. Չամչյան, Ն. Զորայան, Ստ. Նազարյանց, Ա. Այտնյան, Ա. Ղարիբյան, Թ. Ջուհարյան, Ս. Մանդինյան, Ա. Տեր-Գրիգորյան, Ջ. Գյուլամիրյան և ուրիշներ: Ռուս մանկավարժ - մեթոդիստներից լեզվական գիտելիքների ուսումնասիրման խնդրին անդրադարձել են Ե. Տիխեևան, Մ. Լվովը, Վ. Գորեցկին, Օ. Սոսնովսկայան, Մ. Սոլովեյչիկը, Տ. Սալնիկովան, Ա. Բորոդիչը, Տ. Ռամզաևան, Ն. Ռոժդեստվենսկին, Վ. Գորեցկին, Ի. Ագարկովան, Լ. Կլիմանովան, Տ. Բաբուշկինան, Տ. Լադիժենսկայան և ուրիշներ:

Այնուամենայնիվ, այսօր դեռևս վերջնականապես ճշգրտված չէ քերականության, մասնավորապես ձևաբանության տեղն ու դերը տարրական դպրոցի մայրենիի դասընթացում, որոշված չէ կրթական այդ աստիճանում ձևաբանական գիտելիքների ուսուցման ծավալը, համակարգված չեն դրանց ուսուցման ժամանակակից մոտեցումները: Մի կողմից դա բացատրվում է ձևաբանական գիտելիքների զարգացնող մեծ ներուժի և սովորողների՝ քերականության ուսուցման նկատմամբ ունեցած ցածր ակտիվության միջև առկա հակասությամբ, մյուս կողմից՝ ժամանակակից մանկավարժության, մեթոդիկայի ու լեզվաբանության զարգացման արդի միտումներով:

Հետազոտվող հիմնախնդրի գործնական նշանակությունը և դեռևս ոչ բավարար մշակվածությունը, ինչպես նաև այնպիսի պայմանների որոնման անհրաժեշտությունը, որոնց առկայության դեպքում ձևաբանական գիտելիքների ուսուցումը տարրական դպրոցում առավելագույնս կհամապատասխանի սովորողների հոգեբանական ու լեզվաբանական զարգացմանը և որպես արդյունք՝ կապահովի տարրական դպրոցի շրջանավարտների պատրաստականությունը կրթության հաջորդ աստիճաններում արդյունավետ ուսումնառության համար, պայմանավորում են հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է մշակել և ուսումնասիրություններով հիմնավորել ձևաբանական գիտելիքների ուսուցման ժամանակակից արդյունավետ մեթոդական համակարգ՝ հիմնված համագործակցային ուսուցման սկզբունքների և ուսուցման անձնակողմնորոշիչ տեսության վրա:

Հետազոտության օբյեկտը քերականական գիտելիքների ուսուցման գործընթացն է տարրական դպրոցում:

Հետազոտության առարկան ձևաբանական գիտելիքների ուսուցման մեթոդական նոր համակարգն է:

Հետազոտության գիտական վարկածը: Մայրենիի ուսուցման համատեքստում ձևաբանական գիտելիքների ուսուցման արդյունավետությունը կբարձրանա, եթե.

- այդ գործընթացը պլանավորելիս հաշվի առնվեն մայրենիի առարկայական չափորոշչի պահանջներն ու սովորողների լեզվամտածողության առանձնահատկությունները և կրթության բովանդակային բոլոր բաղադրիչները,
- հաշվի առնվեն կրտսեր դպրոցականների բառապաշարի շերտերը և նրանց խոսքում ձևաբանական գիտելիքների կիրառման մակարդակը,
- աշխատանքները կազմակերպվեն կենդանի գրական խոսքի օրինակների վրա,
- կիրառվի տարրական դպրոցում սովորողների կողմից ձևաբանական գիտելիքների յուրացմանը նպաստող մեթոդական նոր համակարգ,
- ձևաբանական գիտելիքների ուսումնասիրումն իրականացվի ընթերցանության նյութերի միջոցով՝ գործնականության սկզբունքի ապահովմամբ,
- ապահովվի սովորողների կողմից ձևաբանական տարրական գիտելիքների համակարգի գիտակցական յուրացումը՝ համագործակցային մեթոդների և սովորողների խոսքի պլանավորված մշտադիտարկումների կիրառմամբ,
- լեզվական գիտելիքների ու կարողությունների ձևավորվածության վերջնական ստուգումն իրականացվի ոչ միայն հարցարանային ստուգման, այլև ստուգատեսի միջոցով:

Հետազոտության խնդիրներն են՝

- ուսումնասիրել տարրական դպրոցում ձևաբանական գիտելիքների ուսուցման պատմական փորձը, գործադրված մեթոդները,
- ուսումնասիրել կրտսեր դպրոցականների բառապաշարի շերտերը, որոշել նրանց խոսքում ձևաբանական գիտելիքների կիրառման մակարդակները,

• մշակել և փորձարկել ձևաբանական գիտելիքների արդյունավետ յուրացմանը նպաստող մեթոդական նոր համակարգ և վերլուծել արդյունքները,

• հիմնավորել ընթերցանության նյութերի միջոցով ձևաբանական գիտելիքների՝ գործնական ճանապարհով ուսումնասիրման արդյունավետությունը մտահաղորդակցական կարողությունների զարգացման առումով,

• վերլուծել տարրական դպրոցի շրջանավարտների՝ մայրենիի առարկայական չափորոշչով նախատեսված կարողությունների և հմտությունների ստուգման հնարավորությունները ստուգատեսի շրջանակներում:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը: Աշխատանքի մեթոդաբանական հիմքը կազմում են Լ. Ս. Վիգոտսկու պատմամշակութային տեսությունը, Դ. Բ. Էլկոնինի և Վ. Վ. Դավիդովի զարգացնող ուսուցման տեսությունը, Ժ. Վ. Պիաժեի ճանաչողության տեսությունը, Վ. Կ. Դյաչենկոյի և Մ. Ա. Մկրտչյանի կոլեկտիվ ուսուցման տեսությունը, ինչպես նաև անձնակենտրոն ուսուցման տեսությունը (Ե. Վ. Բոնդարևսկայա, Ի. Ս. Յակիմինսկայա, Տ. Ի. Կուլպինա, Վ. Պ. Սերիկով, Շ. Ա. Ամոնաշվիլի, Ե. Ն. Շիյանով և այլք):

Հետազոտության մեթոդները: Հետազոտության թեմայով, նպատակներով, խնդիրներով և առաջադրված վարկածով պայմանավորված՝ կիրառվել են համապատասխան մեթոդներ՝ քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ գրականության և փաստաթղթերի ուսումնասիրման, դիտման, զրույցի, թեստավորման, փորձարարական ուսուցման, սովորողների գործունեության արդյունքների վերլուծության, փորձարարական տվյալների որակական և քանակական մշակման մեթոդները:

Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով:

Առաջին փուլում (1998 – 2003 թթ.) վերլուծել ենք տարրական դպրոցի մայրենիի դասընթացի բովանդակությունը, պատմական դրվածքը, հետազոտության մեթոդաբանությունը, ելակետային դրույթները, հետազոտության առարկան, խնդիրները, որոշել ենք հետազոտության մեթոդները:

Այս փուլն ընդգրկում է նաև պրակտիկ աշխատանքը Անանիա Շիրակացու անվան ճեմարանի տարրական դպրոցում և այդ ընթացքում իրականացրած փորձարարական աշխատանքներն ու դրանց վերլուծությունը: Աշխատանքի ժամանակ մշակվել են կրտսեր դպրոցականների կողմից լեզվական հասկացությունների ըմբռնմանը, լեզվական նախնական գիտելիքների և լեզվական տարրական գիտելիքների յուրացմանն ու ամրակայմանը նպաստող բազմաբնույթ վարժությունների համակարգ, քերականական հեքիաթներ, ուսումնական հավաքածուներ: Նշված նյութերը կիրառվել են մեր պարապած դասարաններում, արդյունքները վերլուծվել և ներկայացվել են զեկուցումների, մանկավարժական ընթերցումների միջոցով, հոդվածների տեսքով:

Երկրորդ փուլում (2003 - 2007, 2007- 2012 թթ.) Երևանի «Բյուրական» կրթահամալիրի տարրական դպրոցում փորձարկել ենք թեմաների փոխհաղորդման, հասկացման բերող քարտերի, փոխվարժանքի, տակտային մեթոդիկաները՝ ծառայեցնելով ձևաբանական գիտելիքների ուսումնասիրմանը, դրանք խոսքում կիրառելու կարողությունների ձևավորմանն ու ամրակայմանը:

Այս փուլում Անանիա Շիրակացու անվան ճեմարանի տարրական դպրոցում կիրառել ենք համագործակցային ուսուցման մեթոդներ և 4-րդ դասարանի ավարտին կազմակերպել ենք ստուգատես:

Մեր մշակած և փորձարկած վարժությունների համակարգը, ուսումնաօժանդակ նյութերը լրամշակվել են և ներդրվել ՀՀ հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում, ինչպես նաև «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում հանրապետության տարրական դպրոցի ուսուցիչների (Տավուշի, Արագածոտնի, Արարատի, Վայոց ձորի մարզեր և Երևան) հետ աշխատելու գործընթացում:

Երրորդ (2012 – 2013 թթ.)՝ ամփոփող և ընդհանրացնող փուլում համակարգել, ստուգել և վերլուծել ենք հետազոտության արդյունքները, դրանց հիման վրա շարադրել մեր ատենախոսությունը:

Հետազոտության գիտական նորույթը:

1. Մեր կողմից մշակվել և տարրական դպրոցում կիրառվել է ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման մեթոդական նոր համակարգ, որը ներառում է համագործակցային ուսուցման փոխներգործուն մեթոդները, ինչպես նաև կոլեկտիվ ուսումնական պարապմունքների «ընդհանուր մեթոդիկաները»[1]՝ համապատասխանեցվելով տարրական դպրոցի պահանջներին ու կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկություններին:

2. Հիմք ընդունելով զարգացնող ուսուցման տեսությունը և անձնակենտրոն մոտեցումը՝ մեր կողմից մշակվել է ձևաբանական գիտելիքների գործնական ճանապարհով ուսումնասիրման և դրանց յուրացմանը նպաստող լեզվական վարժությունների համակարգ, որն ուղղված է կրտսեր դպրոցականների ճանաչողական ակտիվության, տրամաբանական կարողությունների ձևավորմանը և հոգեկան գործընթացների զարգացմանը:

3. Տեսականորեն մշակվել և կիրառվել է քառամյա տարրական դպրոցի մայրենիի առարկայական չափորոշչով նախատեսված գիտելիքների ու կարողությունների ստուգման ձև՝ ստուգատես, որը լայն հնարավորություններ է տալիս պարզելու սովորողների ոչ միայն լեզվական գիտելիքների, այլև բանավոր և գրավոր խոսքում դրանք կիրառելու մակարդակը:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ձևակերպվել են ձևաբանական գիտելիքների ուսուցման ժամանակակից մոտեցումներ՝ համագործակցային ուսուցման մեթոդների և ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդիկաների կիրառմամբ, որոնք հայոց լեզվի դասավանդման մեթոդիկան կհարստացնեն տեսական նոր դրույթներով: Դրանք կարող են օգտագործվել տարրական դպրոցի հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների կողմից՝ մայրենիի ծրագրերի, դասագրքերի և ուսումնաօժանդակ նյութերի ստեղծման գործընթացներում: Հետազոտությունը պարունակում է որոշակի նյութ և

[1] «Ընդհանուր մեթոդիկաներ» բառակապակցությունը նույնությամբ վերցված է Մ. Մկրտչյանի «Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականացման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցերը» գրքից. Եր., Հեղ. հրատ., 2011, 148 էջ, էջ 84:

երաշխավորություններ, որոնք օգտակար կլինեն նաև ուսուցիչներին՝ տարրական դպրոցում ձևաբանական գիտելիքների ուսումնասիրման գործընթացն արդյունավետ իրականացնելիս:

Հետազոտության գործնական նշանակությունը: Տեսական տվյալների ուսումնասիրման, ինչպես նաև փորձարարական աշխատանքների ընդհանրացված արդյունքների հիման վրա մեր կողմից մշակվել են գիտամեթոդական հանձնարարականներ, ստեղծվել են ուսումնական տարբեր նյութեր, հավաքածուներ, տպագրվել են ժողովածուներ, որոնք կնպաստեն սովորողների ձևաբանական գիտելիքների հարստացմանը, խոսքի և մտածողության զարգացմանը, ձեռք բերած կարողությունները կյանքում և ուսումնառության ընթացքում ճիշտ և արդյունավետ կիրառելուն, ուսուցիչներին հնարավորություն կտան բարելավելու ուսուցման գործընթացը:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Տարրական դպրոցում ձևաբանական գիտելիքների ուսուցման գործընթացում կարևոր են զարգացնող վարժությունների համակարգի կիրառումը, չափորոշչային կոնկրետ պահանջների կատարմանն ուղղված որոշակի առաջադրանքների ընտրությունը, դրանց ուղղվածությունը դեպի փոխադարձ քննարկումները, խոսքային հաղորդակցման ժամանակ լեզվական գիտելիքների դերի գիտակցումը:

2. Մայրենիի ծրագրային նյութի, մասնավորապես ձևաբանական գիտելիքների գիտակցական յուրացմանն ուղղված մեթոդական նոր համակարգը. ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի ակտիվ ներգրավվածությունը, նրա անհատական առանձնահատկություններին համապատասխան առաջընթացը հնարավոր է լավագույնս ապահովել ուսուցման համագործակցային մեթոդների և ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդիկաների կիրառմամբ:

3. Կրտսեր դպրոցականների՝ չափորոշչով նախատեսված ճանաչողական, տրամաբանական և ստեղծագործական կարողությունների արդյունավետ զարգացմանը նպաստում են լեզվատրամաբանական խաղերը, քերականական հեքիաթներն ու ճիշտ ընտրված բազմագործառույթ ուսումնաօժանդակ նյութերը:

4. Տարրական դպրոցի շրջանավարտների՝ առարկայական չափորոշչով սահմանված ձեռքբերումները ստուգելու նպատակով հարցարանային ստուգման ձևից բացի արդյունավետ է կիրառել ստուգատեսը:

Հետազոտության փորձարարական բազան: Հետազոտություններն անցկացվել են Երևանի Անանիա Շիրակացու անվան ճեմարանի (266 սովորող), «Բյուրակն» կրթահամալիրի (28 սովորող), Երևանի հ.հ. 160 (360 սովորող), 178 (110 սովորող), 170 (190 սովորող), 120 (114 սովորող), Նար - Դոսի անվան հ. 14 (130 սովորող), Ջ. Կիրակոսյանի անվան հ. 20 (154 սովորող), Խ. Դաշտենցի անվան հ. 114 (562 սովորող), Հ. Կարապետենցի անվան հ. 6 (214 սովորող), հանրապետության տարբեր մարզերի դպրոցներում՝ «Կրթության որակ և համապատասխանություն» ծրագրի շրջանակներում: Փորձարարական աշխատանքներին մասնակցել է ավելի քան 230 ուսուցիչ, 2128 սովորող, 112 ծնող:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Աշոտ

Տեր - Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի, մանկավարժության տեսության և պատմության ամբիոնների միացյալ նիստում, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտի, Արցախի պետական համալսարանի, ՀՊՄՀ 90-ամյակին նվիրված և այլ հանրապետական ու միջազգային գիտաժողովներում: Հետազոտության արդյունքներն արտացոլվել են 10 գիտական հոդվածներում:

Ատենախոսության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և 6 մասից կազմված հավելվածից: Ատենախոսության ծավալը 157 համակարգչային էջ է, ընդգրկում է 16 աղյուսակ, 2 գծապատկեր և 5 տրամագիր:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիրները, վարկածը, ներկայացվել են մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության փորձաքննությունն ու կառուցվածքը:

Առաջին՝ **«Քերականության ուսուցման գիտատեսական հիմնավորումը»** գլխում ներկայացրել ենք մայրենի լեզվի քերականության ուսուցման հարցը՝ որպես հայ մանկավարժ - մեթոդիստների քննարկման առարկա: Մասնավորապես ուշադրություն ենք դարձրել ձևաբանական գիտելիքների ծավալի, դրանց ուսուցման մեթոդների և գործածության մեջ եղած դասագրքերի, ուսումնական նյութերի զարգացմանը հայ դպրոցում: Վերլուծության ենք ենթարկել վերջին 75 տարիների ընթացքում լեզվական, մասնավորապես ձևաբանական գիտելիքների ծավալի ու խորության փոփոխությունները ուսումնական փաստաթղթերում: Հիմնավորել ենք մայրենիի համակցված դասի շրջանակներում ձևաբանական տարրական գիտելիքների գործնական ուսուցման նպատակները:

Երկրորդ՝ **«Խոսքի մասերի ուսուցման մեթոդաբանական հիմքերը»** գլխում ներկայացրել ենք մեր կողմից մշակված վարժությունների համակարգը, որը նպաստում է ձևաբանական գիտելիքների ուսուցումը իրական մտածողական գործընթացի վերածելուն: Այն ենթադրում է ճանաչողական տարաբնույթ գործողություններ՝ խթանելով սովորողների տրամաբանական մտածողությունը, ուշադրությունը, կանխատեսելու, ընդհանրացնելու կարողությունները: Մեր մշակած և փորձարկած վարժությունների առանձնահատկությունն այն է, որ դրանք հանդես են գալիս որպես ամբողջական համակարգի մաս՝ նպաստելով խոսքային գործունեության բոլոր տեսակների՝ կարդալու, գրելու, խոսելու, լսելու կարողությունների զարգացմանը: Լեզվական վարժությունների առաջադրված համակարգը կիրառել ենք Երևան քաղաքի հ.հ. 160, 178, 114, 6, 181 դպրոցների փորձարարական դասարաններում և «Բյուրակն» կրթահամալիրում՝ նպատակ ունենալով զարգացնելու սովորողների ոչ միայն վերարտադրողական կարողությունները, մտապահման, հիշողության գործընթացները, այլև նպաստելու

նրանց պատկերավոր մտածողության, դիտողունակության, երևակայության, մտածողության մեթոդների՝ համեմատելու, հակադրելու, ընդհանրացնելու, դասակարգելու, վերլուծելու, եզրահանգելու կարողությունների զարգացմանը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Հարցարանային ստուգման արդյունքները վարժությունների համակարգի կիրառումից առաջ և հետո

Դասա-րանը	Սովորողների թիվը	Հայտորոշիչ ստուգում		Ամփոփիչ ստուգում	
		սխալների միջին թիվը	միջին միավորը	սխալների միջին թիվը	միջին միավորը
1-ին	317	11	3	7	6
2-րդ	298	6	4	3	8
3-րդ	306	5	5	2	7
4-րդ	353	5	4	2	7

Ինչպես երևում է աղյուսակ 1-ում ներկայացված տվյալների համեմատական վերլուծությունից, հայտորոշիչ ստուգման բավական ցածր ցուցանիշները զգալիորեն փոփոխված են: Հայտորոշիչ և ամփոփիչ ստուգումների արդյունքների և սովորողների միջին միավորների փոփոխությունն ավելի տեսանելի է տրամագիր 1-ում:

Տրամագիր 1.Սխալների և միջին միավորի փոփոխությունը վարժությունների համակարգի կիրառումից առաջ և հետո



Այսպես, ըստ փորձարարական ուսուցման արդյունքների համեմատական վերլուծության՝ 1- 4-րդ դասարաններում սխալների միջին թիվը նվազել է 40 – 63%-ով, իսկ միջին գնահատականը բարձրացել է 40 – 50%-ով:

Ներկայացրել ենք բազմաբնույթ խաղերի դերը սովորողների ինչպես անձի ձևավորման մեջ ընդհանրապես, այնպես էլ ձևաբանական գիտելիքների ուսուցման գործընթացում մասնավորապես: Նշենք, որ հետազոտական աշխատանքի ընթացքում մեր կողմից ստեղծվել է խաղերի ժողովածու՝ «100 խաղ դպրոցականների համար», որտեղ ներկայացված են 5 խումբ խաղեր՝ ուղղված սովորողների հոգեկան գործընթացները զարգացնելուն և նրանց ֆիզիկական ծանրաբեռնվածությունը թոթափելուն, և մեծ թվով ուսումնական խաղեր՝ միտված

լեզվական, մասնավորապես ձևաբանական գիտելիքների ուսուցման գործընթացն առավել արդյունավետ դարձնելուն: Մշակված խաղերի օրինակները ներկայացված են աշխատանքին կից հավելված 2-ում:

Փորձարարական և ստուգողական 1-ին դասարաններում և՛ արձանագրման, և՛ ամփոփման փուլերում որպես սովորողների ձևաբանական նախագիտելիքների ստուգման ձևեր՝ կիրառել ենք բանավոր հարցումը և հարցարանային ստուգումը: Ամփոփիչ երկու ստուգումների միջինացված արդյունքներն այսպիսին էին (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Փորձարարական և ստուգողական խմբերում ձևաբանական նախագիտելիքների մակարդակի դինամիկան գիտափորձի արդյունքում

Ձևաբանական նախագիտելիքների մակարդակը	***Փորձարարական խմբեր***		***Ստուգողական խմբեր***	
	Արձանա-գրման փուլ	*Ամփոփման փուլ*	*Արձանա-գրման փուլ*	*Ամփոփման փուլ*
Գերազանց (բարձր)	26	***42***	22	***28***
Լավ (միջին)	76	***98***	67	***74***
Բավարար (ցածր)	54	***16***	67	***51***
Սաների թիվը	156	156	153	153

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, փորձարարական խմբերի սովորողների ձևաբանական նախագիտելիքների մակարդակը լեզվական (ինչպես նաև ընդհանուր զարգացնող) խաղերի նպատակային կիրառումից հետո զգալիորեն փոփոխված են: Այսպես, ըստ փորձարարական աշխատանքների արդյունքների համեմատական վերլուծության՝ 1-ին դասարանցիների ձևաբանական նախագիտելիքների ցածր մակարդակ ունեցողների թիվը փորձարարական խմբերում նվազել է 24.3%-ով, իսկ ստուգողական խմբում՝ 10.46%¬ով: Միջին մակարդակ ունեցողներինը փորձարարական խմբերում նվազել է 24.36%-ով, ստուգողական խմբերում՝ 10.46%-ով, բարձր մակարդակ ունեցողների թիվը փորձարարական խմբերում աճել է 10.26%-ով, իսկ ստուգողական խմբերում՝ 3.93%-ով: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝ արձանագրման և ամփոփման փուլերում փորձարարական և ստուգողական խմբերում ընդգրկված սովորողների ձևաբանական նախագիտելիքների մակարդակների շարժը տոկոսային արտահայտությամբ ներկայացված է աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Փորձարարական և ստուգողական խմբերում ձևաբանական նախագիտելիքների մակարդակի դինամիկան տոկոսային արտահայտությամբ

Ձևաբանական նախագիտելիքների մակարդակը	***Փորձարարական խմբեր***		***Ստուգողական խմբեր***	
	Արձանա-գրման փուլ	*Ամփոփման փուլ*	*Արձանա-գրման փուլ*	*Ամփոփման փուլ*
Գերազանց (բարձր)	16.66%	*26.92*%	14.37%	*18.30*%
Լավ (միջին)	48.71%	*62.82*%	43.79%	*48.36*%
Բավարար (ցածր)	34.61%	*10.25*%	43.79%	*33.33*%
Սաների թիվը	156	156	153	153

Երկրորդ գլխում քննարկվել է նաև տարրական դպրոցում զարգացնող միջավայրի ստեղծմանը նպաստող ուսումնաօժանդակ բազմազան նյութերի հարցը: Ներկայացրել ենք մեր կողմից ստեղծված ուսումնական այն հավաքածուները, որոնք նպաստում են մայրենիի ծրագրի մաս կազմող լեզվական, մասնավորապես ձևաբանական գիտելիքների արդյունավետ յուրացմանը: Դրանք ներկայացված են աշխատանքին կից հավելված 5-ում:

Ուսումնական նյութերի կիրառմամբ փորձարարական ուսուցման արդյունքները ստուգելու նպատակով և՛ փորձարարական, և՛ ստուգողական դասարաններում կիրառել ենք սովորողների գրավոր աշխատանքների ուսումնասիրման մեթոդը և խաղ - վիկտորինան՝ ի տարբերություն հայտորոշիչ ստուգման բանավոր հարցման մեթոդի: Տրամագիր 2-ից երևում է, որ ուսումնական նյութերի կիրառումը փորձարարական և ստուգողական խմբերում սկսելով սովորողների՝ լեզվական, մասնավորապես ձևաբանական գիտելիքների գրեթե նույն մակարդակի պայմաններում, փորձագիտական աշխատանքների արդյունքում փորձարարական խմբերում արձանագրվել է զգալի աճ (Տրամագիր 2):

Տրամագիր 2. Փորձարարական և ստուգողական խմբերի սովորողների ձևաբանական գիտելիքների մակարդակը ուսումնական նյութերի կիրառման արդյունքում



10-միավորային համակարգով գնահատելու դեպքում և՛ փորձարարական, և՛ ստուգողական խմբերում հայտորոշիչ ստուգման ժամանակ ձևաբանական գիտելիքների մակարդակը գնահատվել է 5 միավոր (50%), իսկ ձևավորող գիտափորձից հետո արդյունքները համապատասխանաբար այսպիսին են՝ 8 միավոր (80%) և 6 միավոր (60%): Պետք է նշել, որ խաղ - վիկտորինայի ժամանակ սովորողները փորձում էին ոչ միայն ճիշտ պատասխանել տրված հարցերին, այլև հետևում էին իրենց խոսքին՝ մտքերը ձևակերպելով գրական գեղեցիկ խոսքով:

Ուսումնաօժանդակ նյութերն ապահովում են սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնական գործընթացում, մասնավորապես լեզվական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ՝ խթանելով նրանց մտածողությունը, ստեղծագործաբար աշխատելու կարողությունը: Այդուհանդերձ, տարրական դպրոցում կիրառվող ուսումնաօժանդակ նյութերը պետք է լինեն ոչ այնքան

բազմաքանակ ու բազմազան, այլ բազմագործառույթ. միևնույն ուսումնաօժանդակ նյութն արդյունավետ է կիրառել տարբեր նպատակներով և տարբեր դասարաններում:

Դիտարկել ենք նաև շուրջ վեց հարյուրամյակ գործող ուսուցման դաս - դասարանային եղանակի առավելություններն ու սահմանափակումները և դրանից բխող անհրաժեշտ փոփոխությունների հրատապությունը՝ ցույց տալով, թե որքան արդյունավետ են ուսուցման համագործակցային մեթոդները համադրվում ուսուցման ավանդական մեթոդներին:

Երրորդ՝ **«Ձևաբանական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեթոդական նոր համակարգը»** գլխում ներկայացրել ենք ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդիկաների կիրառումը տարրական դպրոցում՝ դրանք համապատասխանեցնելով տարրական դպրոցի և կրտսեր դպրոցականների առանձնահատկություններին: Ուսուցման կոլեկտիվ եղանակի մեթոդիկաներից անդրադարձել ենք հասկացման բերող քարտերի, թեմաների փոխհաղորդման, փոխվարժանքի մեթոդիկաների կիրառման փորձին մեր պարապած և փորձարարական դասարաններում:

Համեմատելով սովորողների թեմատիկ գրավոր աշխատանքների արդյունքները փոխվարժանքի մեթոդիկայի կիրառումից առաջ և հետո՝ ակնառու է, որ մեծ տեղաշարժ կա ոչ միայն ուղղագրական սխալների թվի նվազման, այլև շարադրությունների և փոխադրությունների մեջ մտքերի ճիշտ ձևակերպման առումով: Ըստ առանձին դասարանների ստուգման ենթարկված 76 սովորողների գրավոր աշխատանքներում թույլ տված սխալների վերլուծությունից պարզ դարձավ, որ սխալների թիվը բավականաչափ նվազել է (Աղյուսակ 4. Ա - քարտերը կիրառելուց առաջ, Հ – քարտերը կիրառելուց հետո):

Աղյուսակ 4. Սովորողների գրավոր աշխատանքներում թույլ տված սխալների դինամիկան փոխվարժանքի մեթոդիկայի կիրառման արդյունքում

Դասարան	***Սխալների քանակն ըստ կոնկրետ ուղղագրության***											
	Ձայնավորների		*Հատուկ անունների*		*Բաղաձայնների*		*Գոյականի թվի կազմության*		*Բաղադրյալ բառերի*		*Թվականների*	
	Ա	Հ	Ա	Հ	Ա	Հ	Ա	Հ	Ա	Հ	Ա	Հ
2-րդ	6	***2***	3	***1***								
3-րդ					7	***4***	4	***1***				
4-րդ									4	***2***	3	***1***

Հաշվի առնելով երեխաների հակումը ստեղծագործելու, երևակայելու, կատարելու այնպիսի առաջադրանքներ, որոնք պահանջում են տրամաբանություն, հնարամտություն, լուծելու խաչբառեր, ռեբուսներ և այլն, որոնք ոչ միայն խթանում են նրանց մտավոր աշխատանքը, զարգացնում ստեղծագործական երևակայությունը, այլև էապես բարձրացնում են սովորողների խոսքային ակտիվությունը՝

մենք փորձել ենք երեխաների սիրելի զբաղմունքը նպատակաուղղել ձևաբանական տարրական գիտելիքների ուսուցմանը: Մեր խնդիրն էր ստեղծագործելու միջոցով արթնացնել ու օգտագործել երեխաների ներթաքուն հնարավորությունները՝ համոզված լինելով, որ երեխաների հորինած պատմություններն աչքի են ընկնում ներքին տրամաբանության ամենատարբեր աստիճաններով:

Երրորդ գլխում ներկայացրել ենք նաև մեր մանկավարժական գործունեության ժամանակ, ինչպես նաև փորձարարական աշխատանքներ իրականացնելու նպատակով Երևանի տարբեր դպրոցներում ընտրված փորձարարական խմբերում՝ քերականական հեքիաթների միջոցով լեզվական, մասնավորապես ձևաբանական գիտելիքների ուսուցմանն ուղղված աշխատանքները, վերլուծել արդյունքները, իսկ երեխաների հորինած հեքիաթներից մի քանիսը զետեղել ենք հավելված 4-ում:

Ընտրված փորձարարական և ստուգողական 4-րդ դասարանների համար կազմել ենք ձևաբանական գիտելիքները ստուգող հարցարան (ավարտական քննական հարցարանի օրինակով) և անցկացրել գրավոր ստուգում: Սովորողների աշխատանքների արդյունքները գնահատվել են 10-միավորային սանդղակով: Փորձարարական և ստուգողական խմբերում գրավոր ստուգման համեմատական պատկերը ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Ձևաբանական գիտելիքների հարցարանային ստուգման արդյունքները փորձարարական և ստուգողական խմբերում

Հարցարանի բովանդակությունը	***Փորձա-բարական խմբեր***	***Ստուգո-ղական խմբեր***
	Միջին միավորը	
▪ անձ և իր ցույց տվող գոյականներ ▪ գոյականի հոգնակի թվի կազմությունը և ուղղագրությունը ▪ գոյականի ձևափոխությունները խոսքում	8	6
▪ բայերի կիրառում անհրաժեշտ դեմքով, թվով և ժամանակով ▪ օժանդակ բայերի դրական և ժխտական ձևերի ճիշտ կիրառում, ուղղագրությունը ▪ բայի ձևային փոփոխությունները խոսքում	7	5
▪ ածականների գործածում բառակապակցու-թյուններում և նախադասությունների մեջ ▪ հոմանիշ և հականիշ ածականների կիրառում խոսքում	9	7
▪ առարկայի թիվ և թվային կարգ ցույց տվող բառեր ▪ թվականների ուղղագրությունը	8	7
Վերջնական գնահատականը (միջինացված)	***8***	6.25≈ ***6***

Փորձարարական խմբերում ձևաբանական գիտելիքների մակարդակը 4-րդ դասարանի ավարտին մոտ 20 տոկոսով բարձր էր ստուգողական խմբերի արդյունքներից, սակայն հաշվի առնելով 1 - 4-րդ դասարանների մայրենիի առարկայական չափորոշչի պահանջները մի կողմից և վերլուծելով վերջին երեք տարիներին կիրառվող 4-րդ դասարանի ավարտական քննական հարցարանների կառուցվածքն ու բովանդակությունը մյուս կողմից՝ պարզ է դառնում, որ ստուգման միայն հարցարանային տարբերակը, միևնույն է, հնարավորություն չի տալիս լիարժեք ու բազմակողմանիորեն ստուգելու և գնահատելու կրտսեր դպրոցականների ձեռքբերումները մայրենիից, մասնավորապես՝ ձևաբանական գիտելիքների կիրառության մակարդակը գրավոր և բանավոր խոսքում: Կարծում ենք՝ հարցարանները նպատակահարմար է կիրառել ընթացիկ և թեմատիկ ստուգումներ իրականացնելիս, իսկ տարրական դպրոցն ավարտող սովորողների՝ մայրենիից ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները ստուգելու և գնահատելու համար արդյունավետ է կազմակերպել ստուգատես, ինչն էլ կազմեց մեր փորձարարական աշխատանքների 2-րդ փուլի բովանդակությունը:

Ի տարբերություն գիտելիքների ստուգման ընդունված հարցարանային ձևի՝ ստուգատեսը յուրաքանչյուր սովորողի հնարավորություն է տալիս.

- կիրառելու չափորոշչով նախատեսված կարողությունները,
- հարստացնելու և զարգացնելու լեզվական, մասնավորապես ձևաբանական գիտելիքները՝ կիրառելով դրանք գրավոր և բանավոր խոսքում,
- ընդարձակելու աշխարհայացքը,
- զարգացնելու անձնային կարևոր որակներ:

Աղյուսակի տվյալները տրամագրով ներկայացնելիս ակնառու է, որ ի տարբերություն հարցարանային ստուգման՝ ստուգատեսը հնարավորություն է տալիս ստուգելու և գնահատելու չափորոշչային ոչ միայն «Գիտելիք» բաղադրիչը, այլև «Կարողություններ, հմտություններ» և «Արժեքներ» բաղադրիչները (Տրամագիր 3):

Տրամագիր 3. Չափորոշչային պահանջների կատարման ստուգումը հարցարանային քննության և ստուգատեսի միջոցով



Այսպիսով՝ տարրական դպրոցի շրջանավարտների՝ լեզվական, մասնավորապես ձևաբանական գիտելիքների, առարկայական չափորոշիչներով և ծրագրերով նախատեսված մյուս պահանջների ստուգման և գնահատման համար ավարտական հարցարանային ստուգումը բավարար չէ: Կարծում ենք՝ այն նպատակահարմար է կազմակերպել որպես 4-րդ դասարանի 2-րդ կիսամյակի ամփոփիչ ստուգում, իսկ ամբողջական, բազմակողմանի ու համակարգված ստուգումն իրականացնել ստուգատեսի կազմակերպմամբ:

Ստուգատեսը հնարավորություն է տալիս խուսափելու առանձին առարկաներից քննություններ կազմակերպելուց, քանի որ այն թույլ է տալիս տարրական դպրոցն ավարտողին գնահատել բոլոր կողմերով՝ դիտարկելով միջառարկայական և վերառարկայական կարողությունների ու հմտությունների զարգացման մակարդակը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քերականական գիտելիքների ուսուցման փորձի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ժամանակ առ ժամանակ գերագնահատվել կամ թերագնահատվել է լեզվական նյութի ծավալը տարրական դպրոցում, մասնավորապես՝ չեն հստակեցվել ձևաբանական գիտելիքների չափը և ուսուցման մոտեցումները:
2. Տարրական դասարաններում քերականության, մասնավորապես ձևաբանության ուսումնասիրումն առաջին հերթին միտված է սովորողների մեջ մայրենիի՝ չափորոշչով սահմանված գիտելիքները լիարժեք, գիտակցորեն *կիրառելու* կարողությունների ձևավորմանը: Այդ նպատակով մեր կողմից մշակվել և փորձարկվել է *մեթոդական նոր համակարգ*: Արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ տարաբնույթ վարժությունների, ընտրված նպատակային խաղերի, բազմագործառույթ ուսումնական նյութերի, քերականական հեքիաթների կիրառմամբ հնարավոր է արդյունավետ իրականացնել սովորողների խոսքային գործունեության բոլոր տեսակների՝ կարդալու, գրելու, խոսելու, լսելու կարողությունների զարգացումը:
3. Արդյունավետ է առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերի *միաժամանակյա* ուսուցումը, քանի որ ձևաբանական և շարահյուսական գիտելիքների ուսումնասիրման ժամանակ նպատակահարմար է հիմք ընդունել քերականական այդ իրողությունների ընդհանրություններն ու դրանց միջև առկա կապերը:
4. Ուսումնական գործընթացում *յուրաքանչյուր սովորողի* ակտիվությունն ապահովելու և ուսուցման անհատականացման նպատակով արդյունավետ է ավանդական մեթոդների համակցումը ժամանակակից համագործակցային մեթոդներին, ինչը սովորողներին հնարավորություն է տալիս մշտապես գտնվելու բանավոր և գրավոր ակտիվ հաղորդակցության մեջ:

5. Հաշվի առնելով սովորողների ինքնակազմակերպման, որոնողական կարողությունների զարգացման պահանջը՝ նպատակահարմար է ձևաբանական տարրական գիտելիքների ուսումնասիրումն իրականացնել կոլեկտիվ ուսումնական պարապմունքների ընդհանուր մեթոդիկաների կիրառմամբ: Օրինակ՝ հասկացման հանգեցնող քարտերի, թեմաների փոխհաղորդման, փոխվարժանքի մեթոդիկաներով աշխատելիս սովորողները ինքնուրույն որոշումներ են կայացնում, իրականացնում կոնկրետ գործողություններ, վերլուծում դրանց արդյունքները, որոշում հետագա քայլերը, գնահատում սեփական հաջողությունները:
6. Լեզվական, մասնավորապես ձևաբանական գիտելիքների արդյունավետ ուսումնասիրությունը տարրական դպրոցում պահանջում է ուսումնական գործընթացի լիարժեք ու բազմակողմանի վերլուծություն, արդյունքների ստուգում, արձանագրում և հրապարակում: Հարցարանները՝ որպես սովորողների ձևաբանական գիտելիքները ստուգելու միջոց, նպատակահարմար է կիրառել ընթացիկ և թեմատիկ ստուգումներ իրականացնելիս:
7. Տարրական դպրոցի շրջանավարտների՝ մայրենիից ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, այդ թվում՝ ձևաբանական գիտելիքները բանավոր ու գրավոր կապակցված խոսքում կիրառելու կարողությունը ստուգելու և գնահատելու համար արդյունավետ է բացի հարցարանային ձևից կազմակերպել նաև ստուգատես:

Ատենախոսության բովանդակությունն արտացոլված է հրատարակված հետևյալ հրապարակումներում՝

1. Բալայան Ա., Խոսքի մասերի ուսուցման լեզվաբանական հիմքերը, ՀՊՄՀ-ի գիտական աշխատանքների ժողովածու, հ. 1, Երևան, «Մանկավարժ» հրատ., 2002, էջ 299 - 302:
2. Բալայան Ա., Գրաճանաչության իրականացումը համագործակցային ուսումնական պարապմունքների միջոցով, «Մեսրոպյան գրերի գյուտի և Արցախում հայոց առաջին դպրոցի ստեղծման 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», ԱրՊՀ գիտական տեղեկագրի N 1 (10) հավելված, Ստեփանակերտ, 2005, էջ 108 - 111:
3. Բալայան Ա., Գրաճանաչության իրականացումը համագործակցային ուսումնական պարապմունքների միջոցով, «Մեսրոպյան գրերի գյուտի և Արցախում հայոց առաջին դպրոցի ստեղծման 1600-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», ԱրՊՀ գիտական տեղեկագրի N 1 (10) հավելված, Ստեփանակերտ, 2005, էջ 108 - 111:
4. Բալայան Ա., Անհատական մոտեցման սկզբունքի իրականացումը համագործակցային ուսուցման պայմաններում, «Մանկավարժական կրթություն, հայացք դեպի ապագա» միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., «Մանկավարժ», 2007, էջ 168 - 171:
5. Բալայան Ա., Փոխադրության ուսուցումը Ռիվինի հակադարձ մեթոդիկայով, Հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, ԳՊՄԻ, «Դպիր», 2007, էջ 276 - 278:
6. Բալայան Ա., Հանրակրթություն. կրթություն բոլորի՞, թե՞ անհատների համար, ԱրՊՀ Գիտական տեղեկագիր (Նյութեր երիտասարդ գիտնականների II գիտաժողովի, Ապրիլ 12-14, 2007թ.), N 3 (16), Ստեփանակերտ, 2007, էջ 142 - 145:
7. Բալայան Ա., Ռիվինի մեթոդիկան որպես սովորողների կարդալու կարողության զար-գացման արդյունավետ միջոց, «Մանկավարժություն», N 1 - 2, 2008, էջ 43 – 52:
8. Բալայան Ա., Ձևաբանական գիտելիքների ուսուցումը թեմաների փոխհաղորդման մեթոդով, ՀՊՄՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, I պրակ, Երևան, 2008, էջ 169-171:
9. Բալայան Ա., Թեստերը որպես միավորային գնահատման միջոց տարրական դպրոցում, «Կրթություն, բարեփոխումներ, հիմնախնդիրներ՝ հանրապետական գիտաժողովի նյութեր. Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան մանկավարժական ինստիտուտ, 2010, էջ 99 - 106:
10. Բալայան Ա., Ձևաբանական գիտելիքների ուսուցումը ուսումնական նյութի ըմբռնմանը հանգեցնող քարտերի միջոցով, «Մանկավարժություն», 1/2013, էջ 37 – 41:

БАЛАЯН АСТГИК ЖОРАЕВНА

МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА ОБУЧЕНИЯ МОРФОЛОГИЧЕСКИМ ЗНАНИЯМ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 00.02 – “Методика преподавания и воспитания” (армянский язык). Защита диссертации состоится 12-ого мая 2016 г. в 12:00 на заседании специализированного совета 020 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Изучение грамматики родного языка в начальной школе направлено на развитие языкового мышления, умственных и творческих, коммуникативных и навыков сотрудничества учащихся, на приобретение знаний о языке, как структуре коммуникативной системы, на формирование навыков полноценного и грамотного применения богатых возможностей родного языка в процессе речевой деятельности. Сегодня еще окончательно не уточнены место и роль грамматики, в частности, морфологии родного языка в начальной школе, не определен объем изучения морфологических знаний на этом образовательном уровне, не разработана система современных подходов их обучения. Практическая значимость исследуемой проблемы и все еще недостаточная разработанность, а также необходимость поиска таких условий, при которых обучение морфологическим знаниям в начальной школе максимально будет соответствовать психологическому и лингвистическому развитию учащихся и в итоге обеспечит подготовленность выпускников начальной школы для эффективного обучения на последующих ступенях образования, обусловливают актуальность исследования.

Цель исследования. Разработать и обосновать современную эффективную методическую систему обучения морфологическим знаниям, основанную на принципах личностно-ориентированного подхода и технологии обучения в сотрудничестве.

Научная новизна исследования. 1. Приняв за основу теорию развивающего обучения и личностно-ориентированный подход, нами разработана система языковых упражнений изучения морфологических знаний практичным путем, которая направлена на развитие не только познавательных, логических умений, но и психических процессов учащихся начальных классов. **2.** Нами была разработана и применена в начальной школе новая методическая система изучения морфологических знаний, которая включает интерактивные методы обучения в сотрудничестве, а также основные методики коллективного способа обучения, которые были приведены в соответствие с стандартными требованиями начальной школы и возрастными особенностями учащихся. **3.** Теоретически разработана и применена новая форма проверки знаний и умений, определенных предметными стандартами родного языка четырехлетней начальной школы, которая предоставляет широкие

возможности выявить уровень не только языковых знаний учащихся, но и их применения в устной и письменной речи.

Теоретическая значимость исследования. Сформулированы современные подходы обучения морфологическим знаниям с применением методов технологии сотрудничества и методик коллективного способа обучения, которые обогатят методику преподавания армянского языка новыми теоретическими положениями. Они могут быть использованы специалистами, занимающимися проблемами начальной школы в процессе создания программ, учебников и пособий по родному языку. Исследование содержит определенный материал и рекомендации, которые могут быть полезны также учителям при эффективном осуществлении процесса обучения морфологическим знаниям в начальной школе.

Практическая значимость исследования. Разработаны научно-методические рекомендации, созданы учебные материалы, напечатаны сборники, которые будут способствовать обогащению морфологических знаний учащихся, развитию речи и мышления, правильному и эффективному применению приобретенных умений в жизни и в процессе обучения, предоставят учителям возможность улучшить процесс обучения.

Положения, выносимые на защиту. 1. В процессе обучения морфологическим знаниям в начальной школе важны применение системы развивающих упражнений, выбор определенных заданий, направленных на осуществление конкретных стандартных требований, их направленность на взаимные обсуждения, осознание роли языковых знаний в ходе речевой коммуникации. **2.** Новая методическая система, направленная на осознанное усвоение программного материала родного языка, в частности, морфологических знаний. Активное вовлечение каждого учащегося в процесс обучения, соответствовавший его индивидуальным особенностям прогресс наилучшим образом можно обеспечить применением методов технологии сотрудничества и методик коллективного способа обучения. **3.** Эффективному развитию познавательных, логических и творческих умений учащихся начальных классов способствуют языковые и логические игры, грамматические сказки и правильно выбранные многофункциональные учебные материалы. **4.** С целью проверки определенных стандартами достижений выпускников начальной школы кроме формы вопросника эффективнее применять метод выставки.

Апробация результатов исследования и основные теоретические положения обсуждались на совместном заседании кафедры родного языка и методики его преподавания имени Ашота Тер - Григоряна, кафедры теории педагогики и истории Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, на научных собраниях Ванадзорского государственного педагогического института имени Ов. Туманяна, АрГУ и иных республиканских и международных конференциях.

Структура и объем исследования. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения. Объем диссертации составляет 157 компьютерных страниц, включает 16 таблиц, 2 схем и 5 диаграмм.

ASTGHIK ZH. BALAYAN

THE SYSTEM OF MORFHOLOGICAL INSTRUCTION IN PRIMARY SCHOOL

Thesis submitted for Degree of Candidate of Pedagogical Sciences, Specialty Field: 00.02 “Teaching and Education Methodology”.

The thesis presentation will be held on 12 May, 2016 at 12:00 p.m. at the session of Specialized Council 00.02 of Higher Attestation Commission, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, Address: 0010, Yerevan, Tigran Mets 17.

SUMMARY

The relevance of the research. In primary schools mother tongue grammar teaching aims at developing students’ language skills, with a particular focus on development of thinking, creativity, communication, and collaborative skills as knowledge of a structure of communication system; mastering speaking skills and applying those meaningfully, and correctly, using richness of mother tongue.

Nowadays the role of grammar and morphology in particular in teaching of mother tongue in primary schools is not clearly defined: the scope of knowledge is not identied, and modern approaches of teaching morphology need further development. The relevance of this research derives from the practical significance of the problem difined and need for further development in the area, as well as, the need to identify characteristics of the learning environment that supports learners’ psychological and language development, and as a result will prepare primary school students to continue studying in middle and high schools.

The aim of the research: To develop an effective system of teaching morphology with experiments based on the principles of cooperative learning and student – centered learning.

The scientific novelty of the research:

1. Based on developmental teaching theory and student - centered approach, we have designed a system of practical exercises supporting morphology learning, which aims at development of cognitive and logical abilities of the primary students along with their psychological development.

2. New system of methodology to examine morphology knowledge of primary school students has been developed and put in practice. The system contains the interconnected methods of cooperative learning as well as the main methods of collective learning at corresponding them with the standard requirements and age-specific aspects of primary school.

3. A new way of assessment of learners’ knowledge and abilities according to the mother tongue requirements and standards for primary school has been developed and applied - exhibition, which provides wide range of strategies to assess not only knowledge of language, but spoken and written language skills application.

The theoretical significance of the research: Modern approaches of teaching morphology have been developed with the use of cooperative learning methods and the

methods of collective learning. They include various materials, publications, assessment tasks and exercises that can be used by primary school educators for curriculum, textbooks and teaching materials development. The materials developed can be very helpful for teachers in the process of teaching morphology more effectively.

The practical significance of the research: Scientific - methodical instructions have been worked out, various learning materials and collections have been created and published. All these materials will enrich the morphological knowledge of learners, develop speaking and thinking skills; learners will be able to use their abilities in everyday life and during the learning process in a very effective way.

Defense regulations:

1. When teaching morphology in primary schools, use of development exercises, selection of tasks aimed to satisfy the demands of standard requirements, provocations for discussions, and understanding of the role of language are very important.

2. The new system of teaching morphology in the program of native language, the active engagement of each learner during the learning process and his progress in accordance with his individual abilities will be effective with the use of teaching collaborative methods and collective learning styles.

3. Linguistic and logical games, grammatical fairy tales and appropriate educational materials will provide the cognitive, creative and logical development of learners in primary schools in accordance with standards.

4. Besides tests, exhibition is a more effective assessment tool to check the achievements of primary school graduate in accordance with standards.

The testing results of the research: The examination of the results of the research has been carried out in Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, at the joined session of the departments of the Theory of Pedagogy and History, at the symposiums of Vanadzor Pedagogical Institute after Hovh. Tumanyan and Artsakh State University, and at many other national and international symposiums. The results of the study have been reflected in 10 scientific articles.

The structure and volume of the thesis. The dissertation consists of introduction, three chapters, the conclusion, bibliography and appendix consisted of 6 parts. The scope of dissertation is 157 computer pages and includes 16 charts, 2 figures and 5 diagrams.